

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻԱՐԲԵՔԻՐԻ  
ՆԱՀԱՆԳՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՈՒ ԱՍՈՐԻՆԵՐԻ ԲՆԱՋՆՋՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԲՐԻՏԱՆԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԵՏ ԵՎ ՀԵՏԱԽՈՒՅՉ ՄԱՅՈՐ ՆՈՅԵԼԻ  
ՏԵՂԵԿԱԳԻՐԸ**

*Ռոբերտ Ա. Թաթոյան*

*«Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան*

Սույն հրապարակմամբ ներկայացվում է Հայոց ցեղասպանության ընթացքում Դիարբեքիրի նահանգում հայերի և ասորիների բնաջնջման վերաբերյալ բրիտանացի դիվանագետ և հետախույզ մայոր Էդվարդ Վիլյամ Նոյելի տեղեկագիրը: «Քրիստոնյաների կոտորածները Դիարբեքիրի նահանգում 1915-ին» վերտառությամբ այս փաստաթուղթը պատրաստվել է 1919 թ. ապրիլին Մարդին քաղաքում, որտեղ հեղինակը գտնվել է փաստահավաք առաքելությամբ, ուստի տեղեկագրում ներկայացվող կոտորածի դեպքերի մեծ մասը վերաբերում է նշված բնակավայրին և Մարդինի գավառին:

Նոյելի տեղեկագրին կից՝ որպես հավելված զետեղվել է Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի բարձր հանձնակատար Արթուր Քալթոքիի՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Ջորջ Քերզոնին ուղղված 1919 թ. հուլիսի 2-ի նամակը, որտեղ նա ներկայացնում է Առաջին աշխարհամարտից առաջ և հետո ըստ ազգությունների՝ Դիարբեքիրի նահանգի ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ մայոր Նոյելի հաղորդած տվյալները:

Մայոր Նոյելին ուսումնասիրողները բնութագրել են որպես «Քուրդիստանի և քրդերի մեծ գիտակ», «1919-ից առ 1922 թվականը ինչպես Անատոլիայի, այնպես էլ Իրաքի Քուրդիստանում բրիտանական գլխավոր գործակալ», ուստի հայերեն թարգմանությամբ հրապարակվող այս փաստաթղթերը, ինչպես նաև 1919 թ. առաքելությանը վերաբերող այլ նյութերը խիստ ուշագրավ են Արևմտյան Հայաստանի հարավային շրջանների ժողովրդագրության, Հայոց ցեղասպանության ընթացքի, ինչպես նաև Առաջին աշխարհամարտից հետո հայ-քրդական, հայ-թուրքական, թուրք-քրդական փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

**Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, Դիարբեքիրի նահանգ, Մարդին, Մեծ Բրիտանիա, բրիտանական հետախուզություն, բրիտանական դիվանագիտություն, Հայկական հարց, քրդեր:

Հոդվածը ներկայացվել է՝ 09.02.2022: Ընդունվել է տպագրության՝ 10.04.2022:

The article was submitted on 09.02.2022 and accepted for publication on 10.04.2022.

Статья поступила 09.02.2022 и была принята к публикации 10.04.2022.

**Ինչպես հղել՝** Ռոբերտ Ա. Թաթոյան, «Հայոց ցեղասպանության ընթացքում Դիարբեքիրի նահանգում հայերի ու ասորիների բնաջնջման վերաբերյալ բրիտանացի դիվանագետ և հետախույզ մայոր Նոյելի տեղեկագիրը», *Ցեղասպանագիտական հանդես* 10, no.1 (2022), 64-83:

**How to cite:** Robert A. Tatoyan, “British Diplomat and Spy Major Noel’s Report on the Extermination of Armenians and Assyrians in Diarbekir Province during the Armenian Genocide,” *Tseghaspanagitakan handes* 10, no.1 (2022): 64-83.

**Как сослаться:** Роберт А. Татоян, “Донесение британского дипломата и шпиона майора Ноэля об истреблении армян и ассирийцев в провинции Диарбекир во время Геноцида армян,” *Цехаспанagitakan андес* 10, no.1 (2022): 64-83.

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Մեծ Բրիտանիան՝ որպես հաղթանակած Անտանտի առանցքային երկրներից մեկը և Մերձավոր և Միջին Արևելքում ավանդական շահեր ունեցող պետություն, կարևոր դերակատարություն է ստանձնում պարտված Օսմանյան կայսրության հետագա ճակատագրի, նրա հետպատերազմյան սահմանների որոշման հարցում: Դրանից ելնելով՝ բրիտանական դիվանագիտությունը կարիք ուներ հստակեցնելու սեփական քաղաքական ուղեգիծը Հայկական և Քրդական հարցերի նկատմամբ, ինչը պայմանավորում էր նաև տեղերից՝ Արևմտյան Հայաստանի և «Քուրդիստանի» տարածքից վստահելի տեղեկատվության ստացման անհրաժեշտությունը:

Նշված նպատակի շրջանակներում՝ 1919 թ. գարնանը փաստահավաք առաքելությամբ՝ թուրք-քրդական փոխհարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու, թուրքական իշխանությունների նկատմամբ քրդերի տրամադրությունները շոշափելու, ինչպես նաև քրդերի հետ քաղաքական տարբեր հարցերի շուրջ բանակցելու հանձնարարականով Օսմանյան կայսրության՝ «հիմնականում քրդերով բնակեցված շրջաններ»<sup>1</sup> է ուղարկվում Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության հետախուզական ծառայության աշխատակից մայոր Էդվարդ Վիլյամ Նոյելը (1886 – 1974), որը վայելում էր Քրդական հարցում բրիտանացի լավագույն մասնագետներից մեկի համբավը<sup>2</sup>:

Նոյելն իր ռազմական-դիվանագիտական կարիերան սկսել է Մեծ Բրիտանիայի հնդկական բանակում որպես կրտսեր սպա, 1915 թ. նշանակվել Պարսկաստանի Ահվազ քաղաքում բրիտանական փոխյուպատոս: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մասնակցել է տարբեր գաղտնի գործողությունների, մասնավորապես բոլշևիկյան հեղափոխությունից հետո Կովկասում տիրող ռազմաքաղաքական իրավիճակի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու, սկսված թուրքական ներխուժմանը հակազդելու հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով 1918 թ. փետրվարին գործուղվել է Թիֆլիս, ապա՝ Բաքու<sup>3</sup>:

Մայոր Նոյելը 1919 թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին կատարել է մի քանի ճանապարհորդություն Օսմանյան կայսրության արևելյան նահանգներ՝ շրջելով Դիարբեքի, Խարբեռդի և Հալեպի վիլայեթների տարածքով, ի թիվս այլ բնակավայրերի՝ այցելելով Ուրֆա, Վերանշեհիր, Դիարբեքիր, Մարդին, Մալաթիա, Այնթապ և Հալեպ,

1 Տե՛ս Նոյելի առաքելության վերաբերյալ բրիտանացի դիվանագետ, Կ.Պոլսում բրիտանական գերագույն հանձնակատարի գրասենյակի 2-րդ քաղաքական պաշտոնյա Էնդրյու Ռայանի (Andrew Ryan) 1919 թ. նոյեմբերի 27-ով թվագրված գեղուցագիրը՝ *Documents on British Foreign Policy, 1919-1939*, First Series, Volume IV, edited by E.L. Woodward, M.A., F.B.A. and Rohan Butler, M.A. (London, H.M. Stationery Off., 1952), 921:

2 Նոյն տեղում, 922: Ինքը Նոյելը հետևյալ կերպ է ձևակերպում իր առաքելության հիմնական նպատակը. «*հակազդել թուրքերի պանիզամիսթիական քաղաքական և բրիտանական ավիանների աջակցությամբ հայկական գերիշխանության խրոխտմանը վախճանելու միջոցով բոլոր քրդերին մեր դեմ լարելու նրանց ջանքերին*» (*Diary of Major Noel on Special Duty in Kurdistan* (Basra, 1919), 1):

3 Նոյելի 1918 թ. կովկասյան առաքելության մասին մանրամասն տե՛ս Peter Hopkirk, *Like Hidden Fire. The Plot to Bring Down the British Empire* (New York-Tokyo-London: Kodansha International, 1994), 264-275, տե՛ս նաև Roland P. Minez, *At the Limit of Complexity: British Military Operations in North Persia and the Caucasus 1918* (Kansas: Army University Press, 2018), 53-54:

գրույցներ և քննարկումներ ունենալով քրդական ցեղապետերի, ինչպես նաև հայկական և ասորական համայնքների երևելի ներկայացուցիչների հետ:

Արևմտյան Հայաստանի և «Քուրդիստանի» շրջաններում 1919 թ. Նոյեմբերի առաքելությունը լայնորեն լուսաբանվել է Քրդական հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականության ուսումնասիրության համատեքստում<sup>4</sup>, ինչը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դրան ծավալուն անդրադարձել է Մուսթաֆա Քեմալն իր հայտնի «Նուրուկ» ճառում<sup>5</sup>: Քեմալն ու իր կողմնակիցները դիտարկում էին Նոյեմբերի առաքելությունը որպես «հակահեղափոխական»՝ նրան կասկածելով քրդերի շրջանում քեմալական շարժման դեմ քարոզչություն տանելու, անգամ հակաքեմալական ուղղվածություն ունեցող քրդական ցեղերի դաշինք ստեղծելու մեջ<sup>6</sup>: 1919 թ. սեպտեմբերի 9-ին Քեմալն անգամ կարգադրել է ձերբակալել Նոյեմբերին, որն այդ ժամանակ գտնվում էր Մալաթիայում, սակայն քրդերի օգնությամբ նրան հաջողվել է խուսափել ձերբակալությունից և փախչել<sup>7</sup>:

Ուսումնասիրողները Նոյեմբերին բնութագրում են որպես «Քուրդիստանի և քրդերի մեծ գիտակ»<sup>8</sup>, «1919-ից առ 1922 թվականը ինչպես Անատոլիայի, այնպես էլ Իրաքի Քուրդիստանում բրիտանական գլխավոր գործակալ»<sup>9</sup>: Նոյեմբերը հայտնի էր քրդամետ տրամադրություններով<sup>10</sup> և իր վերադասի՝ Իրաքի բրիտանական վարչության ղեկավար գնդապետ Արնոլդ Վիլսոնի հետ միասին պաշտպանում էր Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբեռլի վիլայեթների տարածքների վրա բրիտանական հովանավորությամբ անկախ քրդական պետության ստեղծելու գաղափարը<sup>11</sup> (այդ պատճառով նրա հետ առնչված որոշ ժամանակակիցներ մտավախություն էին հայտնում, որ նա կարող է վերածվել «քրդական գնդապետ Լուրենսի»<sup>12</sup>):

4 St'u հասկապես Briton Cooper Busch, *Mudros to Lausanne: Britain's Frontier in West Asia, 1918-1923* (New York: State University of New York Press, 1976), 181-192, նաև՝ Saad Basheer Eskander, *Britain's policy towards the Kurdish question, 1915-1923*, PhD thesis, London School of Economics and Political Science, 1999, հասանելի է առցանց՝ <http://etheses.lse.ac.uk/2625/>, տե՛ս նաև İhsan Şerif Kaymaz, "Britain's Policy toward Kurdistan at the End of the First World War", *Alternatives: Turkish Journal of International Relations* (Summer/Fall 2011), Vol. 10 Issue 2/3, 79 - 103):

5 Мустафа Кемаль, *Путь новой Турции 1919-1927. Т. 1. Первые шаги национально-освободительного движения, 1919* (Москва: Государственное издательство Литиздат Н.К.И.Д., 1929), 116-138:

6 Hakan Özgülu, *Kurdish Notables and the Ottoman State. Evolving Identities, Competing Loyalties, and Shifting Boundaries* (Albany: State University of New York Press, 2004), 152.

7 Busch, *Mudros to Lausanne: Britain's Frontier in West Asia*, 190.

8 Кемаль, *Путь новой Турции*, 449.

9 Robert Olson, *The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellion, 1880-1925* (Austin: University of Texas Press, 1989), 20.

10 *Documents on British Foreign Policy*, 922:

11 Andrew Mango, "Atatürk and the Kurds," *Middle Eastern Studies* 35, No. 4 (1999): 9: Ըստ այդ ծրագրի՝ հայկական պետության մեջ նախատեսվում էր ընդգրկել Արևմտյան Հայաստանի միայն հյուսիսային շրջանները՝ գլխավորապես Էրզրումի ու Տրապիզոնի նահանգների տարածքները (տե՛ս Busch, *Mudros to Lausanne*, 187):

12 David McDowall, *A Modern History of the Kurds* (London: I.B. Tauris, 2007), 128, տե՛ս նաև Özgülu, *Kurdish Notables and the Ottoman State*, 149: Խոսքը Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան

1919 թ. ճանապարհորդությունների ընթացքում հավաքած տեղեկությունները մայոր Նոյելն ամփոփել է իր օրագրերում, որոնք ծառայողական օգտագործման համար սահմանափակ տպաքանակով հրատարակվել էին ճանապարհորդության ավարտից անմիջապես հետո՝ 1919-20 թթ.<sup>13</sup>, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությանը, բրիտանական ռազմաքաղաքական ղեկավար մարմիններին և պաշտոնյաներին հասցեագրված տարբեր տեղեկագրերում, գրություններում և նամակներում, որոնք այսօր պահվում են Մեծ Բրիտանիայի ազգային արխիվի Արտաքին գործերի նախարարության փաստաթղթերի բաժնում (Foreign Office records) և բրիտանական այլ արխիվներում: 1919 թ. առաքելությանը վերաբերող Նոյելի փաստաթղթերը խիստ ուշագրավ են Արևմտյան Հայաստանի հարավային շրջանների ժողովրդագրության, այդ շրջաններում Հայոց ցեղասպանության ընթացքի, ինչպես նաև Առաջին աշխարհամարտից հետո հայ-քրդական, հայ-թուրքական և թուրք-քրդական փոխհարաբերությունների տարբեր ասպեկտների պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

Վերոնշյալից ելնելով՝ սույն հրապարակմամբ թարգմանաբար ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում 1919 թ. ճանապարհորդության ընթացքում մայոր Նոյելի կազմած գրություններից մեկը՝ Հայոց ցեղասպանության ժամանակ Դիարբեքիի նահանգում հայերի և ասորիների բնաջնջման վերաբերյալ տեղեկագիրը:

Գրությունը վերնագրված է «Քրիստոնյաների կոտորածները Դիարբեքիի նահանգում 1915-ին» («Christian Massacres of 1915 in Diarbekir Vilayat»), ծավալով մեծ չէ՝ երեք տպագիր թերթ: Մայոր Նոյելը այն կազմել է 1919 թ. ապրիլի 25-ին Մարդին քաղաքում. դրանով է պայմանավորված, որ տեղեկագրում ներկայացվող կոտորածի դեպքերի մեծ մասը վերաբերում է նշված բնակավայրին և Մարդինի գավառին: Տեղեկությունների աղբյուրը ցեղասպանությունը վերապրած հայերն ու ասորիներն են:

Տեղեկագիրն ըստ կառուցվածքի կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասի: Առաջին մասում Նոյելը հակիրճ ներկայացնում է կոտորածների ընդհանուր պատմությունը՝ նախապատրաստումը (պատճառներ, կազմակերպիչներ, բնաջնջման ծրագրի բովանդակություն), ընթացքը և հետևանքները: Կարևոր է հեղինակի այն դիտարկումը, որ քրիստոնյաների բնաջնջումն ուներ կանխամտածված բնույթ՝ իրականացվել է ըստ նախապես մշակված ծրագրի:

Կոտորածների ընդհանուր նկարագրության վերջում, որպես ամփոփում, հեղինակը ներկայացնում է զոհերի թիվն ըստ հարանվանությունների (հակոբիկյան ասորիներ, առաքելական, բողոքական և կաթոլիկ հայեր, ասորի կաթոլիկներ, քաղղեացիներ): Ըստ հեղինակի՝ Դիարբեքիի նահանգում կոտորածներին զոհ է գնացել 157 000 մարդ, որից 52200-ը՝ հայ, 105 000-ը՝ ասորի<sup>14</sup>:

---

կայսրության դեմ արաբների ապստամբությունը նախապատրաստած բրիտանացի գործակալ Թոմաս Էդվարդ Լոուրենսի (Լոուրենս Արաբացի) մասին է:

13 *Diary of Major Noel on Special Duty in Kurdistan*: Բուն գրքույկում հրատարակության տեղն ու թվականը նշված չեն: Աշխատանքը օգտագործած տարբեր ուսումնասիրողներ որպես հրատարակության վայր նշում են Բասրան կամ Բաղդադը, որպես թվական՝ 1919-ը կամ 1920-ը: Մենք առաջնորդվում ենք ըստ ամերիկացի պատմաբան Բրիտոն Կուպեր Բուշի նշած տվյալների՝ Basra: Superintendent of Government Press, 1919 (տե՛ս Busch, *Mudros to Lausanne*, 396):

14 Ժամանակակից ուսումնասիրողների կարծիքով, ցեղասպանության ընթացքում Դիարբեքիի նա-

Տեղեկագրի երկրորդ մասում Նոյելը ներկայացնում է տարբեր բնակավայրերում առանձին ջարդերի վերաբերյալ տվյալներ՝ դասավորված ըստ ժամանակագրական կարգի: Տրվում են ջարդի ամիս-ամսաթիվը, վայրը, զոհերի թիվը: Նշումների համար նախատեսված մասում ներկայացվում է ջարդին վերաբերող որևէ կարևոր կամ հատկանշական մանրամասնություն: Տեղեկագիրը պարունակում է միայն 1915 թ. հունիս – հոկտեմբեր ամիսների ջարդերի ժամանակագրությունը: Փաստաթուղթն ավարտվում է 1915 թ. հոկտեմբերի 30-ին Դիարբեքիի մոտակայքում մոտ 1000 հայ զինվորի սպանության մասին գրառմամբ:

Տեղեկագրի այս բաժնի համար Նոյելը որպես աղբյուր օգտագործել է կաթոլիկ հոգևորական Հայր Հիացինտ Սիմոնի հուշագրությունը (գրվել է Մարդինում 1916 թ. հունիսին<sup>15</sup>), որի ձեռագրին հնարավորություն է ունեցել ծանոթանալ և համառոտագրել տեղում:

Նոյելի տեղեկագիրը Հայոց ցեղասպանության ընթացքն ու հետևանքները կոնկրետ վայրում՝ Դիարբեքիի նահանգի տարածքում, ականատեսի արձանագրած անաչառ վկայություն է: Հեղինակը քրդական պետության ստեղծման գաղափարի ջատագով էր, հայերի տարածքային պահանջատիրությանն ու քաղաքական հավակնություններին բացասաբար վերաբերվող բրիտանացի ռազմական գործիչ, այսինքն՝ մարդ, որը հիմք չուներ ի շահ հայերի և այլ քրիստոնյա համայնքների խեղաթյուրել փաստերը: Առաջին հերթին այս հանգամանքից ելնելով՝ կարծում ենք, որ տեղեկագիրն արժանի է Հայոց ցեղասպանության պատմությամբ հետաքրքրվող ընթերցողի ուշադրությանը:

Բացի դրանից՝ կարևոր է այն հանգամանքը, որ հեղինակը Դիարբեքիի կոտորածները լայն ներառական համատեքստում որպես բոլոր հարանվանությունների ոչնչացման պատմություն է դիտարկում: Այո, բնաջնջման հատուկ որոշումն ու այն սպասարկող՝ տեղահանության, գույքի բռնագրավման և այլ օրենքներն ընդունվել և կիրառվել էին առաջին հերթին հայերի դեմ, սակայն Հայոց ցեղասպանությունը բազմազգ Օսմանյան կայսրությունը միատարր թուրքակենտրոն ազգային պետության վերածելու երիտթուրքական և քեմալական քաղաքականության համատեքստում է իրագործվել<sup>16</sup>:

---

հանգի զոհված հայերի թիվն ավելի մեծ է: Այսպես, ըստ «Դիարբեքիի տարածաշրջանում հայերի բնաջնջումը» գրքի հեղինակ Հիլմար Կայզերի՝ սպանողի է ենթարկվել նահանգի 120 000-անոց հայ ազգաբնակչության առնվազն 75%-ը, այսինքն՝ 90000 մարդ (Hilmar Kaiser, *The Extermination of Armenians In the Diarbekir Region* (Istanbul: Bilgi University Press, 2014), 270):

15 Hyacinthe Simon, *Mardine, la ville heroique: autel et tombeau de l'Arménie (Asie Mineure) durant les massacres de 1915* (Jounieh: Maison Naaman pour la Culture, 1991), 133-143, ժամանակագրության անգլերեն թարգմանությունը տե՛ս David Gaunt, Jan Bet Şawoce, Racho Donef, *Massacres, Resistance, Protectors: Muslim-Christian Relations in Eastern Anatolia During World War I* (Piscataway, New Jersey: Gorgias Press, 2006), 436-440:

16 Ժամանակակից ուսումնասիրողներից մասնավորապես Թաներ Աքչամը Հայոց ցեղասպանությունը դիտարկում է Թուրքիան միատարրացնելուն (homogenizing) ուղղված լայն քաղաքականության համատեքստում, (տե՛ս, օրինակ, նրա «Կայսրությունից Հանրապետություն. թուրքական ազգայնականությունը և Հայոց ցեղասպանությունը» գրքի «Անատոլիայի միատարրացումը և էթնիկական գտումը» գլուխը (Taner Akçam, *From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian*

Ընթերցողին օգնելու նպատակահարմարությունից ելնելով՝ ծանոթագրել ենք Նոյեմի տեղեկագրում ներկայացված որոշ փաստեր և իրողություններ: Հայոց ցեղասպանության ընթացքում Դիարբեքիի նահանգի հայ բնակչության բնաջնջման պատմության մասին հավելյալ տեղեկություններ կարելի է քաղել հատկապես գերմանացի ուսումնասիրող Հիլմար Կայզերի «Դիարբեքիի տարածաշրջանում հայերի բնաջնջումը» մենագրությունից<sup>17</sup>: Երիտթուրքերի ազգային և ժողովրդագրական քաղաքականությունը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ընթացքը հատկապես Դիարբեքիի նահանգի օրինակով է ուսումնասիրության ենթարկում նիդերլանդաբնակ թուրք պատմաբան Ուդուր Ումիթ Ունգորն իր «Ժամանակակից Թուրքիայի ստեղծումը: Ազգ և պետություն Արևելյան Անատոլիայում, 1913-50» աշխատության առաջին և երկրորդ գլուխներում<sup>18</sup>: Իր «Հայոց ցեղասպանություն: Ամբողջական պատմություն» աշխատության մեջ Դիարբեքիի նահանգի հայերի կոտորածներին առանձին գլուխ է նվիրել ֆրանսահայ ուսումնասիրող Ռայմոն (Հարություն) Գևորգյանը<sup>19</sup>:

Նոյեմի տեղեկագրին կից՝ որպես հավելված թարգմանաբար ներկայացնում ենք Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի բարձր հանձնակատար Արթուր Քալթոբիի՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Ջորջ Քերզոնին ուղղված 1919 թ. հուլիսի 2-ի նամակը, որտեղ նա ներկայացնում է Առաջին աշխարհամարտից առաջ և հետո Դիարբեքիի նահանգի ազգաբնակչության էթնիկական խմբերի թվաքանակի վերաբերյալ մայոր Նոյեմի հաղորդած տվյալները: Ըստ Նոյեմի՝ նախքան պատերազմը նահանգում կար 120 000 հայ բնակչություն, որից 1919 թ. ամռան դրությամբ մնացել էր 20000-ը, պատերազմից առաջ ասորիների թիվը 81000 էր, դրանից հետո՝ 23000: Նշված տվյալներից հետևում է, որ ցեղասպանության ընթացքում զոհվել է մոտ 100 000 հայ՝ նահանգի հայ ազգաբնակչության 83%-ը կամ չորս հինգերորդը, ինչպես նաև 58000 ասորի՝ նախաեղեռնյան ասորի ազգաբնակչության մոտ 72%-ը:

Նշենք նաև, որ, ըստ 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսին հայկական և ասորական պատվիրակությունների ներկայացրած առանձին վիճակագրությունների, նախքան Առաջին աշխարհամարտը Դիարբեքիի նահանգում բնակվում էր 124 000 հայ<sup>20</sup> և 117 000 ասորի<sup>21</sup>: Դրան հակառակ, ըստ օսմանյան պատվիրակության վիճակագրության, 1914-ին նահանգում կար (բոլոր հարանվանությունների) 73226 հայ և 48103 ասորի ազգաբնակչություն<sup>22</sup>: Նոյեմի տվյալների հետ վերոնշյալ թվե-

*Genocide* (London and New York: Zoryan Institute, 2004), 115-157):

17 Hilmar Kaiser, *The Extermination of Armenians In the Diarbekir Region*.

18 Uğur Ümit Üngör, *The Making of Modern Turkey. Nation and State in Eastern Anatolia, 1913-1950* (Oxford University Press, 2011).

19 St'u Raymond Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History* (London-New York: I. B. Tauris & Co Ltd, 2011), 355-380:

20 St'u «Քաղդատական վիճակագրություն հայ բնակչության Օսմ. Կայսրության մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ (Պատրաստուած 1 Ապրիլ 1921)», Թ-էդիկ, *Ամէսուն տարեցոյցը, ԺԶ տարի* (Կ. Պոլիս, տպ. Մ. Յովակիմեան, 1922), 261:

21 Gaunt, *Massacres, Resistance, Protectors*, 406.

22 Kemal Karpat, *Ottoman Population 1830-1914. Demographic and Social Characteristics* (Wisconsin: The University of Wisconsin Press, 1985), 176.

րի համեմատությունը ևս մեկ անգամ փաստում է, որ Առաջին աշխարհամարտից հետո հետպատերազմյան կարգավորման համատեքստում Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության թվաքանակի հարցի արծարծումներում և հարցի վերաբերյալ հակասող վիճակագրությունների պայմաններում բրիտանացի դիվանագետները և առհասարակ բրիտանական դիվանագիտությունը հայերի և քրիստոնյա այլ էթնիկական խմբերի թվաքանակի հաշվարկներում առաջնորդվում էին տվյալ համայնքի տրամադրած թվերով՝ դրանք հավաստի համարելով<sup>23</sup>:

### **Փաստաթուղթ 1. ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1915-ԻՆ**

Այստեղ ներկայացված տեղեկությունները Մարդին քաղաք կատարած իմ կարճատև այցելության ժամանակ ձեռք բերած նյութից են: Արտահայտված կարծիքներն արտացոլում են զուտ տեղացիների տեսակետը և հետևաբար կարող են աղավաղված լինել հատկապես ջարդերին հանգեցրած ընդհանուր քաղաքական իրավիճակին վերաբերող որոշ մանրամասնություններում:

Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո շատ շուտով նշաններ ի հայտ եկան, որ քրիստոնյաների ապագան մշուշոտ է: Անհանգստանալու ամենավաղ առիթը տվեց ոմն գերմանացի պաշտոնյա, որ հենց սկզբից թշնամական վերաբերմունք որդեգրեց քրիստոնյաների դեմ՝ որպես Աստանտի ընկերների դեմ, և առաջարկներ էր անում թուրքերին՝ համոզելով նրանց, որ կոտորածը պատերազմի օրինական մեթոդ է: Դեռևս 1914 թ. Մարդինում մի գերմանացի հայտարարեց, որ Ռայխսպագը հավանություն է տվել հայերի կոտորածին՝ որպես օրինական միջոցի՝ հաշվի առնելով նրանց ապացուցված դավաճանությունը:

Փոթորկի առաջին շոշափելի նախանշանը գաղտնի հեռագիրն էր՝ «Ժողովուրդն ինքը պետք է լուծի դավաճանների հարցը»:

Ուլքեր էին դավաճանները, որոնց ակնարկվում էր:

Մարդինի քրիստոնյաները սկզբում կարծեցին, որ ակնարկը վերաբերում է հայ գինավորներին, որոնք, ինչպես լուրեր էին պտտվում, զանգվածաբար դասալքում էին՝ անցնելով ռուսների կողմը Կովկասյան ճակատում: Մարդինցիները կարծես թե որևէ մտավախություն չունեին, որ հենց իրենց քաղաքը կմեղադրվի դավաճանության մեջ: Չէ՛ որ երկու մութասարիֆներ՝ Շեֆիկ բեյը և Հիլմի բեյը<sup>24</sup>, քաղաքի հավատարմության համար երաշխավորել էին Պոլսին: Քաղաքի հայերի երկու տոկոսից ոչ ավելին էր անդամակցում հայկական մեծ կազմակերպության՝ Դաշնակցությանը: Կաթոլիկ եպիսկոպոսը՝ հայ համայնքի հոգևոր առաջնորդը<sup>25</sup>, ամբիոնից իր հոտին զգուշաց-

23 Առաջին աշխարհամարտից հետո արևմտահայության թվաքանակի հարցին բրիտանական դիվանագիտության անդրադարձների մասին տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտության կոնֆերանսին (1919-1920 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 4, թիվ 1 (2016), 75-82:

24 Մարդինի գավառի՝ 1915 թ. իրար հաջորդած կառավարիչներ:

25 Խոսքը Մարդինի արքեպիսկոպոս Իգնատիոս Մալոյանի մասին է, որ զոհ է գնացել Հայոց ցեղասպանությանը՝ մարտիրոսական մահն ընդունելով 1915 թ. հունիսի 11-ին (նրա նահատակության

րել էր չմիանալ գաղտնի կազմակերպություններին:

Դժվար է ասել՝ Մարդինում հայկական ակտիվ անհավատարմության ապացույցներ իրոք հայտնաբերվել էին, թե՛ ոչ: 1914 թ. և 1915 թ. թուրք պաշտոնյաներն անհետացել են: Արձանագրություններն այժմ հասանելի չեն, իսկ քրիստոնյաների վկայությունները միակողմանի են: Նրանք պնդում են, որ թուրքերը, տնետուն հաճախակի խուզարկություններ կատարելով, զենքի և զինամթերքի գաղտնի պահեստներ չեն հայտնաբերել<sup>26</sup>:

Սակայն եթե անգամ հայկական դավաճանությունը կարելի լիներ մինչև վերջ ապացուցված համարել, հազիվ թե լինի որևէ առարկություն նույնիսկ թուրքերից, որ քրիստոնյա մյուս համայնքները՝ հակոբիկյան, քաղդեական և սիրիական, դրան մաս չեն կազմել:

Ժողովուրդը երկար ժամանակ կասկածների մեջ չմնաց, թե հատկապես ո՞ւմ է վերաբերում «դավաճան» բառը: Կ.Պոլսից հրամաններ ստացվեցին զինաթափել յուրաքանչյուր քրիստոնյա զինվորի և ժանդարմի: Սպաներին կարգադրվեց հեռացնել իրենց քրիստոնյա ծառաներին և ապագայում թույլ չտալ որևէ քրիստոնյայի մուտք ունենալ իրենց մոտ: 1915 թ. հունվարին բոլոր քրիստոնյաները հեռացվեցին կառավարման մարմիններում աշխատանքից: Փետրվարին և մարտին թուրք պաշտոնյաները, այդ թվում՝ նույնիսկ պատգամավորներ, բեռնակիր կենդանիներ գնելու պատրվակով այցելեցին [քրդական] ցեղերին և բացահայտորեն քարոզեցին անհավատներին մահվան ենթարկելու վարդապետությունը: Դրան հաջորդեց ապրիլին և մայիսին ավելի չարաբաստիկ միջոց՝ մուսուլմաններից բաղկացած զինված խմբերի ձևավորումը, որոնք հավաքագրվեցին 50-ից մինչև 60 տարեկան տղամարդկանցից, որոնք դեռևս չէին զորակոչվել բանակ: Նրանք զինված էին հրացաններով ու սրերով, և թևներին կարմիր առանձնանշաններ ունեին:

Հետագա իրադարձությունները մատնանշում են, որ գոյություն ուներ և գործի դրվեց նախօրոք ծրագրված և մանրամասն մշակված քաղաքականություն: Հաղորդվում է, որ 1914 թ. դեկտեմբերին ստեղծվեց Գաղտնի կոմիտե, որը գլխավորեց Թալեաթը, և որի գլխավոր անդամներից մեկը դարձավ Դիարբեքիրի վալի Ռաշիդ բեյը: Կոմիտեի հրամաններին պետք է ենթարկվեին անվերապահորեն՝ պետական ծառայությունից ազատվելու կամ անգամ ավելի խիստ պատժի ենթարկվելու սպառնալիքից խուսափելով: Հենց դրանով էլ բացատրվում է, թե ինչու երկու մութասարիֆի արագ հաջորդականությամբ հեռացրին Մարդինից<sup>27</sup>:

Բացահայտ որդեգրված քաղաքականությունը հետևյալն էր.

1. Տեղահանել կասկածյալներին:

---

մասին մանրամասն տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության և իր հօրին աղէկալի 1915 չլարիին* (Նիւ Եորք, 1985), 276-278:

26 [1915-ի] մայիսին Դիարբեքիրում բացահայտվել է հայկական զինապահեստ, ինչը կարծես թե հնարավորություն է տվել մեղքը բարդել բոլորի և յուրաքանչյուրի վրա (ծանոթագրությունը հեղինակին է – Ռ. Թ.):

27 Խոսքը վերը հիշատակված Շաֆիկ բեյի և Հիւմի բեյի մասին է, որոնք դժկամություն էին դրսևորել հայերի բնաջնջման ծրագիրը ի կատար ածելու հարցում:



2. Հարկադիր աշխատանքի հանձնել յուրաքանչյուրին, ում մոտ զենք է հայտնաբերվել:

3. Մահապատժի ենթարկել յուրաքանչյուրին, ով դավաճանության մեջ է մեղադրվել:

Գործնականում, սակայն, գործի դրվեց գաղտնի ընթացակարգ՝ հետևյալ հանգամանքներում վերը նշված բոլոր երեք խմբերի կոտորածը կազմակերպելու նպատակով. -

Կազմավորվեցին տեղահանվածների շարասյուներ, որոնց հրամայվեց ժամերի ընթացքում պատրաստվել անհայտ ուղղությամբ մեկնելու: Արդեն հիշատակված տեղի ոստիկանության ուղեկցությամբ մեկ կամ մի քանի հանգրվան անցնելուց հետո տեղահանվածները շրջապատվում էին տեղացի քրդերով: Այնուհետև շարասյուներ ղեկավարող սպան կարդում էր մահապատժի վճիռը, որ ենթադրաբար սուլթանն էր ստորագրել, և ընտրված զոհերին առաջարկում հավատարացության գնով փրկել իրենց կյանքը: Մերժում ստանալուց հետո, ինչը տեղի էր ունենում դեպքերի մեծ մասի ժամանակ, շարասյուներ բաժանվում էր հարյուր հոգուց բաղկացած խմբերի և տարվում այնտեղ, որտեղ կային ջրհորներ կամ նախօրոք փորված խոր փոսեր: Այնուհետև նրանց ստիպում էին մերկանալ, և դրան հաջորդում էր ընդհանուր կոտորածը, որին մասնակցում էին տեղացի քրդերը: Հրացան քիչ էր օգտագործվում. գերադասվում էին սուրը և քրդական դաշույնը: Շատ դեպքերում զոհերը թալանվում էին առանց ողորմության հարված<sup>28</sup> ստանալու:

Կարծես թե այդպիսին էր պաշտոնապես հաստատված և քիչ թե շատ պահպանված ընթացակարգը հունիսի առաջին մի քանի ջարդերի դեպքում: Շուտով սակայն ի հայտ եկան հետևյալ փոփոխությունները: Տեղացի պաշտոնյաները նախքան շարասյուն ուղարկելը սկսեցին հնարավորինս քամել իրենց զոհերին՝ [մեկնելը] հետաձգելու հույսով<sup>29</sup>: Մեկնումի օրը անվտանգությունն ապահովելու խոստումների և անգամ առերես քաղաքավարի վերաբերմունք դրսևորելու միջոցով զոհերին մղում էին իրենց հետ վերցնել և իրենց վրա կրել հնարավորինս շատ թանկարժեք քարեր ու զարդեր, որոնք հանվում էին նրանցից քաղաքից հեռանալուց անմիջապես հետո: Մահվան վճիռը կարդալու ձևականությունը վերացվեց, քանի որ մինչ տեղի Գողգոթա հասնելը արդեն իսկ հավաքվում էին քրդերի խմբեր, և սկսվում էր հանապադաստից կոտորած, որին մասնակցում էր ոստիկանական ուղեկցորդ պահակախումբը: Կանանց մերկացնում և բռնաբարում էին: Երիտասարդ [աղջիկներից] ոմանք խնայվում էին՝ մուսուլմանների հարեմները զարդարելու կամ որպես ստրուկ վաճառվելու համար: Արարքների հետքերը բողարկելու հրահանգը անտեսվում էր: Մարմինները թողնվում էին մերկ, բաց երկնքի տակ. հետաքրքիր մանրամասնություն՝ տղամարդիկ՝ փորի, կանայք՝ մեջքի վրա:

28 Բնագրում օգտագործվել է ֆրանսերեն դարձվածք՝ *coup de grace*:

29 Հաղորդվում է, որ Մարդիկի ոստիկանապետ Մամդուկ բեյը 50000 թուրքական ոսկի է վաստակել նման եղանակով: Նա այժմ Դիարբեքիրում է և քրդական ազգային շարժման քրդի տակ մղի հակաբրիտանական քարոզչությամբ է զբաղվում: Նա անշուշտ պետք է պատասխանատվության ենթարկվի (*Ծանոթագրությունը հեղինակինն է - Ռ. Թ.*):

Շատ դժվար է հասկանալ այս կանոնավոր հրահանգների հեղինակների մտածելակերպը կամ հետևել նրանց տրամաբանությանը: Կարելի է միայն ենթադրել, որ դրանք գործադրվել են՝ հետևյալ նկատառումներից ելնելով, որքան էլ որ դրանցից մի քանիսը մանկամիտ թվան: Նրանք հույս ունեին խթան տալ ջիհադին՝ բորբոքելով մարդկանց մեջ արյան ծարավը, և նրանք հաշվարկում էին, որ երբ գնդակը սկսի գլորվել նշված ուղղությամբ, վարակը կտարածվի և մուսուլման բնակչությունը ինքնաբերաբար կշարունակի կոտորածը մինչև քրիստոնյա բնակչությունն ամբողջությամբ դադարի գոյություն ունենալ: Ավելին, թվում է, թե թուրքերը ցանկանում էին օրինականության շղարշ հաղորդել սկսված կոտորածներին՝ հույսեր փայփայելով դրանց շարունակության պատասխանատվությունը գցել ցեղերի կրոնական մոլեգնության և հայկական դավաճանությամբ գրգռված ազգային զգացմունքների վրա: Նաև ենթադրություն է առաջ քաշվել, որ, ջարդերը քաղաքներից հեռու մեկուսի վայրերում իրականացնելով, ժամանակ շահելու հնարավորություն էր ստեղծվում, մինչև դրանց մասին լուրերը տարածվեն, և իրենց հերթին սպասող մյուս հայերը չէին ցրվի գլուղերով մեկ կամ չէին մղվի ակտիվ դիմադրության: Բացի դրանից՝ կպահանջվեր ավելի երկար ժամանակ, որպեսզի նորությունները հասնեին արտաքին աշխարհ և հատկապես Ամերիկա:

Կոտորածների հատկանշական առանձնահատկությունը, որը վեր է բոլոր կասկածներից, այն է, որ դրանք հմուտ և կանոնավոր կերպով կազմակերպվել են Կ.Պոլսից, և տեղացի տգետ մուսուլմանը լոկ օգտագործվել է որպես գործիք: Այդ նա չէ, որ պետք է պատժվի, այլ բարձրաստիճան թուրքը, ինչպես նաև տեղացի թուրքը, որը հանդես էր գալիս որպես պատրաստակամ կամակատար՝ լցնելով սեփական գրպանները:

Ստորև ներկայացված են Դիարբեքիրի նահանգում կոտորածների հիմնական դրվագները. նաև ներառված է մի քանի դրվագ, որ տեղի է ունեցել նահանգին հարակից շրջաններում:

Նշենք, որ զոհերի ընդհանուր թիվը հետևյալ կերպ է բաշխվում.

|                     |                |
